ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ 1947, № 5 *Общественные науки*

Ս Հակոբյան

ՓԱՍՏԵՐ ՃՈՐՏԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մեր պատմաբանները միջնադարյան Հայաստանի տնտեսական պատմության հարցերով բավարար չափով չեն զբաղվել։ Դեռ քննության առարկա չեն հանդիսացել մեր մատենագիրների և հատկապես ձեռագիր աղբյուրների այն բոլոր տեղեկությունները, որոնք նոր և հավաստի վկայություններ են տալիս միջնադարյան Հայաստանի տնտեսական, սոցիալական հարաբերությունների, առանձնապես գյուղացիության վիճակի մասին։

Մեր ներկա երկտողի նպատակն է՝ հրապարակ հանել միայն մի քանի կարևոր, մեր կարծիքով, պատմական նշանակություն ունեցող փաստեր և ապացուցել, որ մեզ մոտ ևս միջին դարերում ճորտեր ու ճորտերի վաճառք գոյություն են ունեցել։

Ֆեոդալական Հայաստանում, ինչպես ամենուրեք, արտադրող հիմնական դասակարգը հանդիսանում էր գյուղական բնակչությունը։

Որքան մեզ հայտնի է, հին հայ մատենագիրներին անծանոթ էր «ճորտ» տերմինը։ Հասարակական ստորին դասերի համար մեր պատմիչները գործ են ածում բնորոշ տերմիններ—շինական, ռամիկ, գեղջուկ, ծառա, աղախին, ստրուկ և ավրոխ։

Ստրուկների, շինականների, ռամիկների, աղատների և նախարարների սոցիալական դրությունը և քաղաքական ու ժառանգական իրավունքներն արտահայտվում էին բոլորովին իրար հակադիր դարձվածքներով և տերմիններով։ Ստրկական վիճակը իր արտահայտությունն էր գտել «ի կարգի ստրկութեան», «ստրկութեան ծառայութիւն» դարձվածքներում, իսկ շինականների մասին խոսելիս՝ մեր մատենագիրները միշտ էլ գործածում են «ի հարկի ծառայութեան» կամ «ծառայութիւն» կամ «բաժին և վիճակ ծառայութեան», ցույց տալով այդ դասերի ոչ արտոնյալ, ստրկական և հարկատու վիճակը։

Այդ դարձվածքները դառնում են ավելի որոշակի, երբ մատենագիրները ցանկանում են արտահայտել իշխող դասերի քաղաքական և ծառայական-վասալական իրավունքները ու միշտ և ամեն քայլափոխին նրանց հակադրում են շինականների, ստրուկների, ռամիկների անազատ կացությանը։ Եթե ստրուկների և շինականների մասին նրանք գործ են ածում վերոհիշյալ տերմինները, ապա նախարարների և աղատների վասալական-ֆեոդալական ծառայության համար ունեն նրանց դրությանը հասապատասխան տերմիններ, այսպես, օրինակ՝ «ի սպասու ծառայութեան», «ի կարգի ծառայութեան» կամ «արքունի ծառայութիւն»։

Ֆեոդալական արտադրական հարաբերությունների զարգացմանը դուգընթաց՝ միջնադարյան Հայաստանում հանդես է գալիս և քաղաքացիական իրավունք է ստանում ճորտ *տերմինը, որը որոշակի արտահայտում է*

գյուղացիների ճորառական կացությունը։ Անշուշտ, միջնադարյան արևելյան Հայաստանը տնտեսական և հասարակական հարաբերությունների տեսակետից միատարր և միօրինակ բնույթ չուներ։ Երկրի տարբեր մասերում հողային տիրապետության և հարկային սիստեմի տարբեր հարաբերություններ են եղել։ Արտադրության հիմքը այս շրջանում հանդիսանում էր հողի մասնավոր սեփականությունը, իսկ հողային հարաբերությունների նյութական հետևանքը և հատուկ հատկանիշը՝ հողային հարկերը։ Բացի հողային հարկերից՝ մեր աղբյուրները, արդեն մասամբարար, հիշատակում են նաև հարկադիր աշխատանքի և կոռային պարտավորությունների առկայությունը միջնադարյան Հայաստանում։ Ֆեոդալական հարաբերությունների աճմանը զուգընթաց՝ հին Հայաստանի արտադրող հիմնական դասերը—ռամիկներն ու շինականները—քայքայվում էին, կորցնում էին իրենց արտադրական միջոցները, զրկվում էին հողակտորից և տնտեսական կախման մեջ էին դրվում հողատիրոջից։ Գյուղական բնակիչների այս խավերն արդեն ճորտացվում և հանդիսանում են հողատերերի սեփականություն։ Ճորառացվում են ոչ միայն ռամիկն ու շինականը, այլև պատերազմական գերիները, ֆեոդալական կախման վիճակում դրված բնակիչները և նրանց ընտանիքի անդամները։ Այս երևույթն ընդհանուր է եղել բոլոր երկրների համար և չէր կարող բացառություն կազմել Հայաստանի պայմաններում։

Մատենադարանում պահվող ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները ոչ միայն ունեցել են ընդարձակ կալվածներ, արոտավայրեր, այգիներ, բանջարանոցներ, ջրաղացներ, ձիթհաններ, խանութներ, արհեստանոցներ, անասունների բազմաթիվ հոտեր, այլև ճորառ գյուղացիներ։ Այս առաջադրված խնդրի լուծման համար մեզ անգնահատելի վկայություններ են տալիս Մատենադարանում պահպանված № № 3031, 2939 և 8150 ձեռագրերը։ № 3031 ձեռագիրը գրված է հիմնականում 17-րդ դարում։ Գրիչը հիշատակում է, որ նա իր աշխատությունը կազմելիս օգտագործել է Ստեփանոս Տարոնացու և Կիրակոսի (Գանձակեցու—Ս. Հ.) պատմական աշխատությունները և նշում է. «...Եւ միւս ես գոյր պատմագիրք յորում գրեալ էր, զորոյ անուն ոչ կարացաք գիտել... քանզի կարի փտեալ էր, ոչ սկիզբ կար և ոչ վերջ»[1] Բարեբախտաբար № 8150 ձեռագրի գրիչը մեզ թողել է տեղեկություն այն մասին, թե ով էր այդ պատմագրքի հեղինակը։ № 8150 ձեռագրի գրիչը նույնպես հիշատակում է, որ ինքը աշխատությունը շարադրել է Ստեփանոս Տարոնացու և Կիրակոս Գանձակեցու պատմական աշխատությունների հիման վրա և ավելացնում է. «...Եւ այլ ևս բերեց մեծապատիւ վկայ զՍիմեոն քաջ քարտուղարն Սանահնու, որ զսրբուհւոյ Աստուածածնիս հիմնարկութեան և աւարտման ականատես եղեալ։ Այս Սիմեոն իր զիրն գրել է Ցիւ թվ...» (Այսինքն՝ մեր թվականության 972 թ.։ Ս. Հ.)։ Ուրեմն և՛ № 3031, և № 8150 ձեռագրերի հիմքը կազմել է ավելի հին ձեռագիր, որը գժբախտաբար կորած է, քան Ստեփանոս Տարոնացու և Կիրակոս Գանձակեցու աշխատությունները։ Ավելին. այդ երկու ձեռագրերում օգտագործված են նաև Սանահնի վանքի վիմական արձանագրությունները, որոնք, մեր կարծիքով, ունեն պատմական ավելի իրական նշանակություն

[1] Ձեռագիր № 3031, էջ 36—37։

և արտահայտում են իրենց էպոխայի սոցիալ-տնտեսական կյանքի պատմությունը։ Ձեռագրերում հիշատակված բոլոր փաստերը ճորտերի վաճառքի, նրանց գնման մասին՝ տոգորված են մի ընդհանուր իմաստով և ունեն մի նշանակություն, որ և՛ ճորտը և՛ նրա ընտանիքի անդամներն ազատ չեն, անձնապես պատկանում են տիրոջը և հանդիսանում են գնման ու վաճառքի առարկա։ Ահա այդ կարգի մի քանի վկայություններ.

«Ես դուրայխանս մեր կամաւ և օժարութեամբ տվինք մեր ճոռտունանանց ԲՌ ընչացն (մի բառն անընթեռնելի է. Ս. Հ.) դարի խողն մինչև սրղեղանց խող Սարգիս և Թարօեղ պարոն տիրին (պետք է լինի տերերին. Ս. Հ.) վրա ծախեցինք»։[1]

Ինչպես երևում է այս արժեքավոր տեղեկությունից, Դուրայխանը ճորտերին վաճառել է նրանց հողով ու կայքով։ Միջնադարյան Հայաստանում ճորտական դիկտատուրայի և անօրինակ շահագործման հետևանքով ճորտերն իրենց ընտանիքներով փախչում էին դաժան տերերից և «ապաստան» գտնում հոգևոր ֆեոդալների մոտ։ Հավանական է, որ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները կատաղի պայքար էին ծավալում ոչ միայն ֆեոդալական կալվածներն ընդարձակելու, այլև բանվորական ձեռքերով այդ կալվածներն ապահովելու համար։ Ճորտատերերից մեկը մեզ թողել է հետևյալ արժեքավոր վկայությունը.

«...Եկի Սոճահին Արդուրի Որդոցն ի մաւտ, իմ ճորտ Ռուլխանն զբոյ կուզեի տանեի Արդուրի որդի Սարգիս եպիսկոպոսն մեջ մտաւ ինձանից զնեց. ես իմ կամաւ ծախեցի Բ որդովն Ա աղջկանովն ծախեցի մի դահարի... վկայ են այս բանիս Արդութի որդի Սարուխան. հաղբատցի տէր Ովանէս տէր վարդան...»։[2]

Ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում, տիրոջ սեփականատիրական իրավունքը տարածվում էր նաև ճորտի ընտանիքի անդամների վրա և այդ իրավունքը օրինականացված էր։ Ճորտատերերը վաճառելով ճորտին և նրա ընտանիքի անդամներին, պայմանագիր էին կնքում գնողի հետ և հիշատակարան էին թողնում այն մասին, որ ոչ ոք իրավունք չունի «ի բաց առնելու» նրանց։

Պարոն տեր Սարգիս եպիսկոպոսը միջամտում է Սուլխան ճորտի գործերին ոչ թե նրան ազատություն տալու համար, այլ աշխարհիկ ֆեոդալից վանական կալվածները փոխադրելու համար, որպեսզի ճորտը «դուլուղ անի» վանքին։

Ահա այդ վկայությունը.

«Ես սարգիս եպիսկոպոսս գնեցի սուլխանն իր Բ որդովն և մէկ դըստերովն... վանքին դուլուղ անեն...»։[3]

Մեզ հավանական է թվում, որ ճորտերի և նրանց ընտանիքների վաճառքը գույքով և հողով՝ բացառիկ երևույթներ չէր, այլ կրում էր ընդհանուր բնույթ։ Ավելորդ չենք համարում մեջ բերել նաև մի քանի այլ վկայություններ։

[1] Անդ, էջ 423։ (Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ձեռագրի ուղղագրությունը թողել ենք անփոփոխ)։ Բոլոր դեպքերում ընդգծումները մերն են։

[2] Ձեռագիր № 3031 էջ 340։

[3] Անդ, էջ 341։

«Ես սարգիս պարոն տէրս գնեցի Մարխօն իւր կնկանով և խիզանով...[1] (Խիզան՝ ընտանիք. Ս. Հ.).

«Ես հախնազարի տգա Դուրայխանս իմ նորտ խեչերեան տղի(ն). ծախեցի սարգիս պարսն տիրին վրայ...»[2]

Հաճախակի են դեպքերը, երբ գրիչները ճորտերի փոխարեն հիշատակում են մշակների վաճառքի փաստեր.

«Ի Թվիս ՈՀԱ...ես գաւիթ իշխանս որդի շաղրկայ գնեցի ղղոռնակագոմի կէսն և շինական մի հալալ աշինի մըշակն...»[3]

Այս անչափ կարևոր վկայությունը խիստ աղավաղված է մեջ բերված Հ. Կոստանյանի «Վիմական տարեգրություններ» աշխատության մեջ. Ավելորդ չենք համարում մեջ բերելու Կոստանյանի այդ աղավաղված տեքստը.

«Ես գաւիթ իշխան որդի Շոթոոկայ [ձեռագրում՝ շողրկայ] գնեցի զՈւղնակ Գոմի [ձեռագրում՝ ղղոռնակագոմի] կէսն շինականի [ձեռագրում՝ և շինական մի] ի հալալչին [ձեռագրում՝ հալալ աշինի մըշակը]...»[4]

Եզակի չեն դեպքերը, երբ տերս վաճառում է շինականին հողով, տնով, տեղով և ամբողջ գույքով. Ահա այդ կարգի մի քանի վկայություններ.

«...ես պարոն ատիրեկս...մեր ուռնակա ծիլ շինականն հող ու ջուր որ կէսն վրայ սարգիս տէրին ծախել ինք ավետիսի տուն ու տեղն կալ ու մարագն գոմն ու դուռն առաջն զեղումն ու սարումն ինչ տուն ու տեղ ունի էն էլ ծախեցինք ու հախն առանք... մեր յօժար կամօք ռունակա շինականքն իրեանց եզովն ու ջրովն ծախեցինք... այսուհետև ոչ խարնի ոչ կռոի և ոչ եեծելի բան չունինք...»[5]

Ինչպես երևում է, այստեղ հիշատակված շինականներն իրենց սոցիալական կացությամբ և քաղաքական իրավունքներով հավասարված էին ճորտերին և նույնպես համարվում էին տիրոջ սեփականությունը. Շինականները, բացի հարկադիր աշխատանքներից, վճարում էին նաև խաբջ—հարկ. Որ շինականների տունն ու տեղը, հողն ու ջուրը պատկանում էին տիրոջը, որ նա լիակատար տեր էր իր գյուղացիների վրա, այդ պարզ երևում է նաև հետևյալ վկայություններից.

«Ես պարոն զասպարս մեր կամաւ... շինական շիխու մխիթարն, ակոբն խէչիկն ծախեցինք վրայ սարգիս պարոն տէրին... իրենց տնովն իրենց տեղովն իրենց եզովն իրենց ջրովն...լինի պարոն, ճորտ ազգական ոչ ընդունի նրա հետ բան չունի...»[6]

«Վիմական տարեգրություններ»-ում կան նույնպես բաղմաթիվ վկայություններ, որ տեր Բարսեղն ուներ ոչ միայն ընդարձակ կալվածներ, սեփական գյուղեր, այլև «Բ գեղ շինական...»[7]

Շինական գյուղացին առանց տիրոջ համաձայնության իրավունք չուներ տնօրինելու իր հողակտորը և կայքը. Եթե տերը գիր և համաձայ-

[1] Անդ, էջ 343.
[2] Անդ, էջ 205.
[3] Կ. Կոստանյան, «Վիմական տարեգրություններ», էջ 66.
[4] Ձեռագիր № 3031, էջ 303—4, նաև 307—8.
[5] Անդ, էջ 413.
[6] Անդ, էջ 418
[7] Կ. Կոստանյան, «Վիմ. տար.», էջ 249.

նություն չէր տվել, ապա նա կարող էր շինականին ստիպել, որպեսզի վերջինս կատարի իր կամքը։

«Ես սարդիս հախնադարս մեր շինական զուկաս պարոն տէրին Զորուն հոգ էր առել գեղում հոգ էր տվել առանց մեր զիր առանց մեր վկայութիւն մենք էն զապուլ չարինք...պարոն տէր սարդսին դաւիցանք դաւրմոզ բէկին հասկցինք Նորա եռորտին բէրինք... հախ էլաւ թէ կուզի ծախի թէ մարդի բաշխի մենք էլ միջում դուի չունինք...»։[1]

Այստեղ ճորտերի և շինականների միջև նույնպես հավասարության նշան է գրված։ Տիրոջ համար և՛ ճորտը, և՛ շինականը իրենց սոցիալական դրությամբ նույնն են և նա նրանց հետ կարող է վարվել այնպես, ինչպես ինքն է ցանկանում։

Ճորտատերերի և ճորտերի միջև դասակարգային սուր պայքարը չի դադարել միջնադարյան Հայաստանում։ Եթե ճորտատերերի նշանաբանն էր՝ «...մարդ հանգիստ պառկի, դատում չանի և ոչ աշխատի, այլ գայլոց վաստակն ուտի...»,[2] ապա ճորտերն ու շինականները պայքարում էին ազատվելու տիրոջ գերիշխանությունից։ Շահագործվող դասերը դիմելով տերերին, հայտարարում են՝ «զհաց քոյ ոչ ուտեմք և զհանդերձս քոյ ոչ ըզգենումք, ոչ ունիս իշխանութիւն ի վերայ մերս», կամ՝ «զհաց քո ուտեմք և զհանդերձ քոյ զգենումք ոչ կամիմք ծառայել քեզ...»։[3]

Ֆեոդալական դարաշրջանի գրիչը իր այս արտահայտություններով տվել է դասակարգային հարաբերությունների և պայքարի բնորոշ մոմենտներից մեկը։ Ճորտերն ու շինականները, որոնք ապրում էին տիրոջ հաշվին, հագնում էին նրա հագուստը և ուտում նրա հացը, չէին ցանկանում ենթարկվել տիրոջ իշխանությանը, իսկ գրիչը դա համարում էր «չարագոյն» և վտանգավոր երևույթ ու պահանջում էր խիստ պատժել այդ գաղափարը կրողներին։

Դատելով ձեռագիր աղբյուրների շարադրանքից ու լեզվից, մեզ թվում է, որ բերված փաստերը վերաբերում են 14—17 դարերին։

Առայժմ մեր ձեռքի տակ եղած պատմական այս փաստերը դեռ մեզ հնարավորություն չեն տալիս ճորտական իրավունքն ընդհանրացնել ամբողջ Հայաստանի նկատմամբ։ Բայց դժվար է պնդել և ապացուցել, թե ճորտերի վաճառքի ու գնման այս փաստերը բացառիկ երևույթներ էին միջնադարյան Հայաստանում։ Ավելի հավանական է թվում, որ այդ երևույթը մասսայական բնույթ էր կրում, հակառակ դեպքում ճորտ տերմինի գործածությունը և ճորտերի առուծախի այս փաստերը, որոնք պատահական չեն, անհասկանալի կմնային։ Թվում է, որ ճորտերի վաճառքի այս փաստերն ուշագրավ փաստեր են, որովհետև մենք ձեռագրերում չենք հանդիպում և ոչ մի ակնարկի, որ գրիչները ճորտերի մասին իրենց հաղորդած տեղեկությունները համարեն ինչ-որ արտակարգ և արտասովոր բան։ Ընդհակառակը, ամբողջ շարադրանքից ստացվում է այն ապավորությունը, որ և՛ ճորտերի ու շինականների վաճառողները, և՛ նրանց գնողները այն

1 Ձեռագիր № 3031, էջ 388—89։
2 Ձեռագիր № 9939, էջ 379։
3 Անդ, էջ 31։

համարում էին հասարակական կյանքի նորմալ երեույթ, իսկ արքայական օրենքները հաստատում ու օրինականացնում էին տիրոջ իրավունքը ոչ միայն հորաի, այլև նրա ընտանիքի ու՝ կայքի նկատմամբ։ Ճորտատերերն իրավունք են ունեցել հորտերին ու հորտացված շինականներին նվիրել, կտակել, վաճառել, գնել, պատժել, գրկել սեփականությունից և այլն։ Ամենից առաջ, հենց այն պատմական իրողությունը, որ հորտատերն իրավունք ուներ հետապնդելու, որոնելու և ետ բերելու իր ճորտին ու նրա ընտանիքին—ապացույց է այն բանի, որ այդ իրավունքը ստրատված և օրինականացված երևույթ էր միջնադարյան Հայաստանում։